



Կապիտալ  
ինվեստմենթս

Հաստատված է «Կապիտալ Ինվեստմենթս»  
փակ բաժնետիրական ընկերության  
2016թ. հունիսի 30-ի  
բաժնետերերի ընդհանուր ժողովում

Գլխավոր տնօրեն Ս.Կարապետյան



30 հունիս, 2016թ.

**«ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏՄԵՆԹՍ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

1.	Առաջարկվում է փոխել կապիտալ ընկերության անվանումը «Կապիտալ Ինվեստմենթս»-ից «Կապիտալ Ինվեստմենթս Փակ Բաժնետիրական Ընկերություն»-ի:	0.00%
2.	Առաջարկվում է փոխել կապիտալ ընկերության կազմակերպչական փաթեթի կազմը:	0.00%
3.	Առաջարկվում է փոխել կապիտալ ընկերության կազմակերպչական փաթեթի կազմը:	0.00%
4.	Առաջարկվում է փոխել կապիտալ ընկերության կազմակերպչական փաթեթի կազմը:	0.00%
5.	Առաջարկվում է փոխել կապիտալ ընկերության կազմակերպչական փաթեթի կազմը:	0.00%

Երևան 2016թ.

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Կանոն 1-1. Կանոնակարգը: Անվանումը

- (ա) Սույն Կանոնակարգը ներառում է «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հաճախորդին մատուցվող ծառայության սակագները սահմանող և դրա հետ կապված հարաբերությունները կարգավորող Կանոններ:
- (բ) Սույն Կանոնակարգի անվանումն է ««Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության սակագների կանոնակարգ», իսկ կրճատ անվանումը՝ «Սակագների Կանոնակարգ»:

### Կանոն 1-2. Կառուցվածքը: Կողիֆիկացիան և հղումները

- (ա) Սույն Կանոնակարգը բաղկացած է հետևյալ գլուխներից՝ Գլուխ 1. «Ընդհանուր դրույթներ», Գլուխ 2. «Սակագները, դրանց հաշվարկումն ու վճարումը»:
- (բ) Գլուխները համարակալվում են արաբական թվերով:
- (գ) Վերնագրերը միավորում են «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերության կողմից սահմանված Կանոններն ըստ գործունեության կամ կարգավորման առարկայի: Կանոնակարգի օգտագործման պարզության նպատակով Վերնագրերը համարակալվում են ըստ հերթականության: Վերնագրի անվանումը համառոտ բնորոշում է դրանում միավորված Կանոնների առարկան:
- (դ) Օգտագործման հարմարության և պարզության համար Կանոնները վերնագրվում են և համարակալվում՝ ըստ Վերնագրի համարի հերթականության (օրինակ՝ «Կանոն 2.1»-ը նշանակում է երկրորդ Վերնագրի ներքո գործող առաջին Կանոնը):
- (ե) Կանոնն ունի հետևյալ կառուցվածքը՝
  - (1) Կանոնը բաղկացած է Ենթականոններից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն փոքրատառերով (օրինակ՝ (ա), (բ) և այլն).
  - (2) Ենթականոնը բաղկացած է Կետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող արաբական թվերով (օրինակ՝ (2)) կամ, եթե շարադրանքը առանձին տողերով չէ՝ հոմեթական փոքր թվերով (օրինակ՝ (ii)), և
  - (3) Կետը բաղկացած է Ենթակետերից, որոնք համարակալվում են փակագծերում ներառվող հայերեն մեծատառերով (օրինակ՝ (Բ)) կամ, եթե շարադրանքը առանձին տողերով չէ՝ հոմեթական փոքր թվերով (օրինակ՝ (ii)):
- (զ) Սույն Կանոնակարգում Հղումները կատարվում են հետևյալ կանոններով՝
  - (1) վերնագրին հղումը կատարվում է Վերնագրի համարի նշմամբ և ենթադրում է տվյալ վերնագրի բոլոր Կանոնները.
  - (2) այլ Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «1-3(բ)(5)(Ա) Կանոնի համաձայն» հղումը նշանակում է «1-3 Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն».
  - (3) եթե հղում է կատարվում նույն Կանոնի Ենթականոնին, Կետին կամ Ենթակետին, կամ նույն Ենթականոնի Կետին կամ Ենթակետին, կամ նույն Կետի Ենթակետին, ապա հղելիս նշվում է առավել խոշոր միավորի անունը: Օրինակ՝ «(բ)(5)(Ա) ենթականոնի համաձայն» հղումը նշանակում է «սույն Կանոնի (բ) Ենթականոնի 5-րդ Կետի (Ա) ենթակետի համաձայն».
  - (4) սույն Կանոնակարգի որևէ Վերնագրի (Կանոնի, Ենթականոնի, Կետի և այլն) հղում կատարվում է առանց «սույն Կանոնակարգի» բառերի օգտագործման: Համապատասխանաբար, եթե հղում է կատարվում որևէ ենթակետի առանց կետը նշելու, ապա հղումը համարվում է կատարված տվյալ կետի ենթակետին:

**Կանոն 1-3. Կանոնակարգի ուժի մեջ մտնելը և ուժը կորցնելը**

- (ա) Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգի առանձին ենթականոններով, սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 10-ից:
- (բ) Սույն Կանոններն ուժը կորցրած են ճանաչվում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից այն ուժը կորցրած ճանաչելու պահից:
- (գ) Սույն Կանոնների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում “Կապիտալ Ինվեսթմենթս” Փակ Բաժնետիրական Ընկերության՝ 2015 թվականի դեկտեմբերի 14-ին Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված Սակագների կանոնակարգը:
- (դ) Ընկերությունը պարտավորվում է սույն Կանոնակարգը պատշաճ ծանուցել իր Հաճախորդներին: Պատշաճ է համարվում Ընկերության ինտերնետային կայքում սույն Կանոնակարգի տեղադրումը, ինչպես նաև Ընկերության գործունեության վայրում նրա հրապարակումը:

**Կանոն 1-4. Օրենսդրությունը: Նպատակն ու մեկնաբանությունը**

- (ա) Սույն Կանոնակարգի Կանոնները ներքին իրավական ակտ են և ընդունվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածը:
- (բ) Սույն Կանոնակարգի Կանոնները մեկնաբանվում են ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

**Կանոն 1-5. Հասկացություններ**

Սույն Կանոնագրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) «**Ընկերություն**». «Կապիտալ Ինվեստմենթս» փակ բաժնետիրական ընկերություն.
- 2) «**Հաճախորդ**». ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտվում է Ընկերության ծառայություններից կամ դիմում է դրանցից օգտվելու համար.
- 3) «**Սակագին**». Ընկերության կողմից Հաճախորդին ներդրումային հիմնական և լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով.
- 4) «**Օր**». աշխատանքային և բանկային օր:

**ԳԼՈՒԽ 2. ՍԱԿԱԳՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆ ՌԻ ՎՃԱՐՈՒՄԸ**

**Կանոն 2-1. Սակագները**

(ա) Ընկերության կողմից ծառայությունները մատուցվում են հետևյալ սակագներով՝

**(1) Բրոքերային ծառայությունների մատուցման սակագներ\***

		Սակագին յուրաքանչյուր գործարքի (հանձնարարականի) համար
1.	Կորպորատիվ արժեթղթերի առքի կամ վաճառքի գործարքներ	մինչև 100 մլն ՀՀ դրամ՝ 0.05%-ից 0.5% 100 մլն դրամից ավելի՝ 0.02%-ից 0.07%
2.	Պետական արժեթղթերի առքի կամ վաճառքի գործարքներ	մինչև 10 մլն ՀՀ դրամ՝ 0.05%-ից 0.1%, 10-50 մլն. ՀՀ դրամը 0.03%-ից 0.08%, 50 մլն դրամից ավելի՝ 0.01%-ից 0.03%
3.	Արժեթղթերով ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ	Գործարքի ծավալի տարեկան 0.4%-ը**
4.	Արտարժույթի առքի կամ վաճառքի գործարքներ	մինչև 50 մլն ՀՀ դրամ՝ 0.06% 50 մլն. դրամից ավելի՝ 0.05%
5.	Ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) առքի կամ վաճառքի գործարքներ	0.05%-ից 3.5%

6.	Ֆոնդերին միջնորդային ծառայությունների մատուցում	պայմանագրային, մինչև գործարքների ծավալի 4%-ը
----	---	--

\*Ընկերության միջնորդավճարը չի կարող պակաս լինել 1000 ՀՀ դրամից յուրաքանչյուր գործարքի համար  
 \*\*Սակագինը գործում է նաև ռեպո/հակադարձ ռեպո գործարքների երկարաձգումների հայտերի համար և հաշվարկվում է տարվա փաստացի օրերի քանակով:

**(2) Արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններ**

		Սակագինը (<< դրամ)
1.	Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հետ կապված ծառայությունների մատուցում	պայմանագրային
2.	արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի) երաշխավորված տեղաբաշխում	պայմանագրային, սակայն ոչ ավելի տեղաբաշխվող արժեթղթերի անվանական ծավալի 7%-ը
3.	Արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի) չերաշխավորված տեղաբաշխում	պայմանագրային, սակայն ոչ ավելի տեղաբաշխվող արժեթղթերի անվանական ծավալի 4%-ը
4.	բաժնետոմսերի երաշխավորված տեղաբաշխում	պայմանագրային, սակայն ոչ ավելի տեղաբաշխվող բաժնետոմսերի անվանական ծավալի 10%-ը
5.	բաժնետոմսերի չերաշխավորված տեղաբաշխում	պայմանագրային, սակայն ոչ ավելի տեղաբաշխվող բաժնետոմսերի անվանական ծավալի 7%-ը

**(3) Խորհրդատվություն**

		Սակագինը (<< դրամ)
1.	Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում	պայմանագրային

**(4) Արժեթղթերի փաթեթի կառավարում**

		Սակագինը (<< դրամ)
1.	Կառավարման վարձ	գույքի սկզբնական արժեքի մինչև 2%-ը
2.	Պարզկավճար	պայմանագրային, սակայն ոչ ավելի գույքի վերջնական և սկզբնական արժեքների տարբերության մինչև 50%-ը

**(5) Փոխառության տրամադրում**

Փոխառության տրամադրում հաճախորդներին՝ արժեթղթերով գործարքների իրականացման համար, պայմանով, որ Ընկերությունը հանդիսանում է նման գործարքի կողմ		Սակագինը (<< դրամ)
1.	Արժեթղթերի փոխառությամբ տրամադրում	պայմանագրային, մինչև 12%-ը
2.	Դրամական միջոցների տրամադրում	Պայմանագրային՝ վերաֆինանսավորման տոկոսադրույք + մինչև 6%-ը

**(6) Արժեթղթավորման հիմնադրամների կառավարում**

		Սակագինը (<< դրամ)
1.	Արժեթղթավորման հիմնադրամների կառավարման ծառայությունների մատուցում	պայմանագրային, Հիմնադրամի չմարված պարտավորությունների կամ ակտիվների մինչև 2%-ը

## Կանոն 2-2. Սակագների հաշվարկման և վճարման կարգը

- (ա) 2-1(ա) կանոնով նախատեսված ծառայությունների սակագները չեն ներառում ԱԱՀ-ը, ինչպես նաև այլ կազմակերպությունների (առևտրային համակարգերի, բորսաների, դեպոզիտարիաների, պահառուների, ռեեստրավարների և այլն) կողմից գանձվող միջնորդավճարները, Հաճախորդի սպասարկման հետ կապված այլ ծախսերը (հարկեր, տուրքեր և այլն):
- (բ) Կանոնակարգով սահմանված Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է բացառապես ՀՀ դրամով, բացառությամբ այն դեպքի, երբ Հաճախորդը «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ է: Տվյալ դեպքում Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումը կարող է իրականացվել նաև արտարժույթով:
- (գ) Եթե Ընկերության կողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքն արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է ՀՀ դրամով արտահայտված գումարի, որի նկատմամբ հաշվառվում է համապատասխան տոկոսը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հաճախորդը «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ է: Տվյալ դեպքում ցուցանիշի արժեքը արտահայտվում է արտարժույթով:
- (դ) Եթե Ընկերության կողմից «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի իմաստով ռեզիդենտ համարվող Հաճախորդին մատուցվող ծառայության չափորոշիչ ցուցանիշի արժեքն արտահայտված է արտարժույթով, ապա ծառայության դիմաց գանձվող վճարը հաշվարկվում է ելնելով վճարը գանձելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամի նկատմամբ արտարժույթի հաշվարկային փոխարժեքից:
- (ե) Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է բանկային փոխանցման միջոցով: Ընդ որում, Հաճախորդի հետ կնքված պայմանագրով նախատեսված լինելու դեպքում մատուցվող ծառայությունների համար վճարը կարող է Հաճախորդից գանձվել անակցեպտ գանձման միջոցով:
- (զ) Այն դեպքում, երբ սույն կանոններին համապատասխան հաշվարկված գումարները՝ ԱԱՀ-ը ներառյալ, կազմված են ամբողջ թվերից և նաև որոշակի լումաներից, ապա լումաները կլորացվում են դեպի ներքև 1 (մեկ) Հայաստանի Հանրապետության դրամի ճշտությամբ:
- (է) Սույն կանոններով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա ժամկետներում համապատասխան գումարների վճարման չկատարման պարագայում Ընկերությունը տվյալ հաճախորդի նկատմամբ կարող է հաշվարկել տույժ՝ վճարի ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,15%-ի չափով: Տույժի հաշվարկման ժամկետը չի կարող գերազանցել 6 ամիսը: Նշված ժամկետի ավարտից հետո վճարման ենթակա գումարների, ներառյալ տույժի գումարի, վճարման չկատարման պարագայում Ընկերությունը կարող է գանձել վճարման ենթակա գումարը, ներառյալ տույժի գումարը, բայց ոչ պակաս, քան 100,000 ՀՀ դրամը:
- (ը) Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի գործարար համբավը, Ընկերության հետ համագործակցության ժամանակահատվածը, պատմությունը, համագործակցության այլ պայմաններ ու առանձնահատկություններ, հաճախորդին կարող են առաջարկվել Կանոններից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) սակագներ: